



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Նորակերտ, norakertgyux@mail.ru

«07» օգոստոսի 2020թ.

գ. Նորակերտ

թիվ 238

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի ղեկավարի հաշվետվությունը համայնքապետարանի 2020թ. առաջին կիսամյակում ծավալած գործունեության վերաբերյալ:

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կատ. Վ. Դովլաթյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ
ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԺՈՂՈՎԻ

ՕՐԱԿԱՐԳ

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ
ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՁԵԿ. Համայնքի ղեկավար Ա. Պետրոսյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի ղեկավար Ա. Պետրոսյանը հակիրճ ներկայացրեց 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքապետարանի կողմից համայնքի տարբեր ոլորտներում իրականացրած գործունեությունը, անդրադարձավ տարիներ շարունակ լուծում պահանջող առկա հիմնախնդիրներին, վեր հանեց թերություններն ու բացթողումները:

Համայնքի ղեկավար Ա. Պետրոսյանը հարկ համարեց նշել, որ նկատվում է հողերի կենտրոնացման և խոշորացման ուղղությամբ գործողությունների աշխուժացում. համայնքի շուրջ 10 սեփականատերերի հողատարածքներ օտարվել են և կենտրոնացվել մեկ սեփականատիրոջ ձեռքում, գործընթացը կարծես ունի շարունակական բնույթ, երևույթ որը դրական է մի շարք առումներով:

Այնուհետև համայնքի ղեկավարը անդրադարձավ 2020 թվականի առաջին կիսամյակում բյուջեի կատարման հիմնական ցուցանիշներին, որն ըստ առանձին եկամտատեսակների հետևյալ պատկերն է ներկայացնում:

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Նախատեսված /հազ.դրամ/	Փաստացի /հազ.դրամ/	Կատարման %-ը
Ընդամենը սեփական եկամուտներ՝ որից	29227,7	6368,4	21,8
Հողի հարկ	3910,0	496,5	12,7
Գույքահարկ	13190,0	4928,2	37,4
Տեղական վճարներ	1165,0	76,4	6,6
Հողի վարձավճար	32,7	15,0	45,9
Տեղական տուրքեր	10920,0	852,3	6,6

Հարկ է նշել, որ եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է համավարակի առկայությամբ, բացի այդ տեղական վճարներում ամրագրված է նաև մանկապարտեզ հաճախող երեխաների համար հավաքագրման ենթակա ծնող վճարները, որը հետագայում կճշգրտվի:

Համայնքի ղեկավար Ա. Պետրոսյանը հակիրճ անդրադարձավ 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքապետարանի կողմից իրականացրած հիմնական աշխատանքներին:

1. Ամբողջովին վերականգնվել և արդիականացվել է համայնքի շուրջ 12կմ երկարության արտաքին լուսավորության ցանցը, լուսավորվել է նաև համայնք մուտք ապահովող գլխավոր ճանապարհը: 100հատ ԼԵԴ լուսատուներ նվիրաբերել է <<Արփիինետ>> ՍՊԸ - ն :
2. Հիմնվել է մոտ 3հա անտառ՝ անմշակ, քարքարոտ տարածքում, որի հարևանությամբ հիմնականում հասարակական նախաձեռնությամբ կառուցվել է մատուռ:
3. Ավարտին է մոտենում նորակառույց 3 թաղամասերի գազի գծի անցկացման շուրջ 1800գծմ երկարության գազատարի նախագծման և փաստաթղթերի կազմման գործընթացը: Գործընթացն իրականացվում է սուբվենցիոն ծրագրի շրջանակներում:
4. Հիմնանորգվել է Բարեկամության թաղամասի ևս մեկ բազմաբնակարան շենքի տանիք: Երկրում տիրող արտակարգ դրությամբ պայմանավորված ձգձգվում է վերջին երկու տանիքների վերանորոգման համար կնքված պայմանագրով թիթեղների ձեռքբերման գործընթացը:
5. Համայնքի բնակիչներին տրվող դրամական աջակցությունները տրվում են հիմնականում բուժման և սգո պարագաների ձեռք բերման համար՝ խիստ հասցեական:
6. Համավարակի պատճառով համայնքում ինքնամեկուսացած 5 ընտանիքների պարբերաբար տրվել է առաջին անհրաժեշտության պարագաներ և սննդօգնություն: Միևնույն ժամանակ օգնություն է ցուցաբերվել նաև համայնքի անապահով 6 ընտանիքի:

Կարևորելով տարվա ընթացքում կատարած աշխատանքների մեծ ծավալը համայնքի ղեկավարը այնուամենայնիվ նշեց, որ համայնքում շատ են տարիներ շարունակ իրենց լուծմանն սպասող խնդիրները, դրանք են՝

- ներհամայնքային փողոցների օր առաջ բարեկարգման անհրաժեշտությունը,
- ոռոգման խիստ մաշված ջրագծերի վերանորոգումը,
- գերեզմանատան տարածքի ընդհանուր բարեկարգումը,

Դպրոցի, մանկապարտեզի և մշակույթի տան հետ կապված ծրագրերը մնում են արդիական և գտնվում են համայնքի ղեկավարի մշտական ուշադրության կենտրոնում, որոնց իրագործումը խաթարվել է համավարակի պատճառով:

Համայնքի ղեկավար Ա. Պետրոսյանը նշեց, որ իր հետագա աշխատանքային գործունեությունը շարունակելու է մնալ բաց և թափանցիկ, համայնքի յուրաքանչյուր բնակիչ գործող կայքի միջոցով հաղորդակից կարող է լինել կատարվող բոլոր իրադարձություններին:

Համայնքի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները մշտապես կլինեն ուշադրության կենտրոնում և հնարավորության սահմաններում լուծումներ կտրվեն :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ



**2020 թվական հուլիսի 15
գ. Նորակերպ**